

### ՎԱՀԱԳՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տեղական ինքնակառավարման հարցերով անկախ իրավական փորձագետ,  
Երևանի Հյուսիսային համալսարանի իրավագիտության և հասարակագիտական առարկաների ամբիոնի դասախոս,  
Երևանի իրավատնտեսագիտական և կառավարման քոլեջի իրավագիտության ամբիոնի վարիչ,  
Երևանի Հյուսիսային համալսարանի իրավագիտության և հասարակական առարկաների ամբիոնի հայցորդ



## ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հոդվածում քննարկվել է համայնքների ինքնուրույնությունն ապահովող նորմատիվ իրավական համակարգի խնդիրները, մասնավորապես՝ համայնքի ավագանուն՝ որպես քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության սուբյեկտ դիտարկելու և քաղաքացիական դատավարությանը մասնակցելու հարցերը:

Գործող իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ համայնքների զգալի մասը չեն իրացնում Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված դատական պաշտպանության երաշխիքները, և հետևաբար՝ տարբեր ոլորտներում ծագող իրավահարաբերություններում համայնքների ինքնուրույնության պահպանման և իրացման հարցերում առաջանում են մի շարք խնդիրներ:

Հեղինակը փորձում է վեր հանել այն խնդիրները, որոնք ծագում են համայնքներին ՀՀ քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի սուբյեկտ դիտարկելու տեսանկյունից:

*Հիմնաբառեր- համայնքներ, համայնքների ինքնուրույնություն, քաղաքացիական իրավունքներ, երաշխիքներ, տեղական ինքնակառավարում, դատական պաշտպանություն:*

Իրավաբանական գրականության մեջ և ընդհանրապես իրավակիրառ պրակտիկայում բազմիցս են շոշափվում համայնքների դերի և նշանակության, դրանց ինքնակառավարման մարմինների և առհասարակ տեղական ինքնակառավարման համակարգի խնդիրների մասին հարցերը:

Ըստ որում, արդար կլինի նշել, որ այս խնդիրներին անդրադարձ է կատարվում միայն մունիցիպալ իրավունքի տեսանկյունից: Մինչդեռ համայնքը, մեր կարծիքով՝ իր հանրային կառավարման մարմիններով հանդերձ, մինչ մունիցիպալ իրավունքի սուբյեկտ հանդիսանալը, առաջին հերթին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի սուբյեկտ է, և որպես այդ իրավունքների սուբյեկտ, կրում է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է»:

Անհրաժեշտ է նկատել, որ մինչ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունները՝ 2005 թվականի սահմանադրական փո-

փոխություններով ևս համայնքը համարվում էր «իրավաբանական անձ»<sup>2</sup>:

Այս կապակցությամբ հարկ է անդրադառնալ այն խնդրին, որ մինչ այս պահը Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ, թե ո՞րն է «հանրային իրավունքի իրավաբանական անձը»:

Սահմանադրական նոր կարգավորումը, փաստորեն իր արտացոլումը չի գտել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքի հիմնական աղբյուր հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետության գործող քաղաքացիական օրենսգիրքը Սահմանադրության նոր տեքստի ընդունումից շուրջ մեկ տարի անց էլ համայնքներին դիտարկում է որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, սակայն չի հստակեցնում քաղաքացիական իրավահարաբերություններում դրանց ստույգ կարգավիճակը<sup>4</sup>:

Ստացվում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարա-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

բերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ *հավասար հիմունքներով*:

Իրավակիրառ պրակտիկայում, համայնքի անունից քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ է մտնում համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձը:

Սակայն, ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, համայնքի տեղական ինքնկառավարման մարմիններն են համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին, որոնք էլ ըստ մեզ, պետք է դատարանում ներկայացնեն համայնքի շահերի պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք, թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ<sup>5</sup>:

Դրա համապատասխան էլ, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերից, որոնք, նույնպես օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքեր:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքից (հոդվ. 6) հետևում է, որ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները համարվում են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը:

Հետևաբար, ծագում է հետևյալ հարցը, եթե քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կարող են առաջանալ և՛ համայնքի ղեկավարի, և՛ համայնքի ավագանու կողմից ընդունված ակտերից, ապա ինչու՞ է այդ հարաբերություններից ծագող վեճերի քննությանը, որպես իրավահարաբերության մասնակից հանդես է գալիս միայն համայնքի ղեկավարը, կամ նրա կողմից ընտրված ներկայացուցիչը (փաստաբանը)<sup>6</sup>:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ գործնականում համայնքի ավագանին, որպես տեղական ինքնակառավարման մարմին՝ իրավասություն չունի մասնակցելու քաղաքացիական իրավահարաբերության բուն գործընթացներին, հետևաբար և իրավունք չունի

մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված քաղաքացիաիրավական վեճերի լուծմանը՝ հանդես գալով որպես դատավարության մասնակից, կամ՝ քաղաքացիական դատավարության իրավունքի սուբյեկտ:

Հարցի էությունը կայանում է նրանում, որ համայնքի ավագանին, լինելով համայնքի օրենսդիր ներկայացուցչական մարմին<sup>7</sup>, կարող է ընդունել որոշումներ, և դրանց համար չկրել քաղաքացիաիրավական և դատավարական պատասխանատվություն:

Գտնում ենք, որ իրավաստեղծ մարմինն, ինքը պետք է կրի իր կողմից ընդունված իրավական ակտի կիրառման կապակցությամբ առաջացած քաղաքացիաիրավական հարաբերությունների և այդ հարաբերություններից ծագող վեճերով դատավարության մասնակիցը լինելու պարտավորությունը:

Վերը նշվածին համահունչ, առկա է բավականին մեծ խնդրահարույց իրավական կարգավորումների շրջանակ, որովհետև և՛ իրավակիրառ, և՛ դատական պրակտիկայում, Հայաստանի Հանրապետության համայնքների ավագանիներն իրենց իսկ կողմից ընդունված ակտերի շուրջ ծագած վեճերում փաստորեն հանդես չեն գալիս որպես դատավարության մասնակից կամ որ նույնն է՝ որպես սուբյեկտ:

Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը համայնքի երկու մարմիններից մեկին՝ համայնքի ղեկավարին, իրավական հնարավորություն է ընձեռել համայնքի անունից հանդես գալու դատարաններում և այլ մարմիններում՝ ներկայացնելով համայնքի շահերը, իսկ համայնքի ավագանուն՝ որպես նույն համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի, սուսկ հնարավորություն են ընձեռել իրականացնելու տեղական իրավաստեղծ գործունեություն, առանձին դեպքերում նաև վերահսկողություն՝ տեղական ինքնակառավարման մյուս մարմնի՝ համայնքի ղեկավարի գործունեության նկատմամբ<sup>8</sup>:

Այսպիսով, օրենսդիրը, սահմանելով տեղական ինքնակառավարման մարմիններից յուրաքանչյուրի լիազորությունները, դատարան դիմելու և դատարանում որպես դատավարության սուբյեկտ հանդես գալու լիազորություն է սահմանել միայն համայնքի ղեկավարի համար, իսկ ավագանուն լիազորություն է տվել, որ նա դատական կարգով կարողանա վիճարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները:

Չնայած այն հանգամանքին, որ վիճարկվող իրավական նորմերը բավարար չափով հստակ են,

www.journal.lawinstitute.am

այսինքն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում հստակ ամրագրված են «տեղական ինքնակառավարման մարմիններ» եզրույթները, այնուամենայնիվ, դատարանները պրակտիկապես դրանք կիրառում են այլ մեկնաբանությամբ:

Հայաստանի Հանրապետության գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունը հայցվոր կամ պատասխանող համարում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին, մինչդեռ իրականում համայնքն է հանդիսանում իրավաբանական անձ, և ոչ թե համայնքի ղեկավարը:

Միաժամանակ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է համայնքի ավագանու լիազորությունները, որտեղ հստակ սահմանված է, որ համայնքի ավագանին վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը, վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ և համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում *համայնքի սեփականություն հանդիսացող գույքն* օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնաբանյին գինը:

Վերոնշյալից հետևում է նաև, որ համայնքի ավագանին իր անմիջական մասնակցությունն է ունենում համայնքի սեփականություն համարվող գույքի օտարման մասով: Ըստ որում, ոչ միայն անմիջական մասնակցություն, այլև հիմնական (որոշիչ) դեր, այդ իմաստով պատկանում է համայնքի ավագանուն: Սակայն օրենսդրական այս կարգավորումը ևս դատավարական իրացման տեսա-

կետից իր համապատասխան արտացոլումը չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսդրությունում:

Դա մասնավորապես երևում է նրանից, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածը վերնագրված է «Տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը գործին» կապակցության ձևով, բայց հոդվածի բուն բովանդակության մեջ իրավունքներ են սահմանված միմիայն համայնքի ղեկավարի համար:

Մեր նպատակն է ընդգծել այն հանգամանքը, որ համայնքի ավագանին ոչ միայն կարող է դատարանում հանդես գալ հայցվորի կարգավիճակով՝ միայն ավագանու անդամի իրավունքների կամ շահերի պաշտպանության նպատակով, այլ նաև համայնքի ընդհանուր շահերից ելնելով: Պետք է հավաստել նաև այն փաստը, որ համայնքի գույքային շահերի պաշտպանության հայցով դատարան դիմելու իրավասություն անհրաժեշտ է որ ունենա ոչ միայն համայնքի ղեկավարը, այլ նաև համայնքի ավագանին:

Այլ կերպ ասած, քանի որ համայնքի ավագանին հանդիսանում է տեղական ինքնակառավարման մարմին՝ քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության մասնակից (սուբյեկտ) և համայնքի գույքային սեփականություն հանդիսացող ունեցվածքի հիմնական տնօրինող, ուստի անհրաժեշտ է, որ նա իր կողմից տնօրինվող գույքի նկատմամբ և ծագած իրավահարաբերությունների վեճերի հարցերում օժտված լինի որոշիչ իրավունքներով:

Այս կապակցությամբ, առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում շրջանառվող քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածում հատկապես նշել քաղաքացիական դատավարությանը՝ որպես կողմ մասնակցելու համայնքի ավագանու (նրա անդամների) իրավունքը:

www.journal.lawinstitute.am

<sup>1</sup> Տեսական գրականության մեջ օգտագործվում է իրավունակության և գործունակության երկմիասնությունը բնութագրող «իրավասություն/բնութայնություն» եզրույթը, մինչդեռ ոչ գործող օրենսդրությունը և ոչ էլ քաղաքացիական գործերի լուծման դատական պրակտիկան այդ եզրույթը չեն օգտագործում: Հետևաբար՝ նշված եզրույթը հազիվ թե ինքնուրույն գոյության իրավունք ունի (Տե՛ս, Гражданское право. Под ред. Суханова Е.А. д-е изд., М., 1998, էջ 116):  
<sup>2</sup> Տե՛ս, նշված խմբագրությամբ Սահմանադրության 184-րդ հոդվ.:

<sup>3</sup> Այսուհետ՝ Քաղ.օր.:  
<sup>4</sup> Տե՛ս, Քաղ. օր. հոդվ. 128:

<sup>5</sup> Տե՛ս, Քաղ. օր. հոդվ. 10, մաս 1-ին:

<sup>6</sup> Տե՛ս, ՀՀ քաղ. դատ. օր., հոդվ. 39-ի 2-րդ մասը:

<sup>7</sup> Տե՛ս, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-ին մասը.

<sup>8</sup> Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի 05.05.2017թ. ՍԳ-Ո-1365 որոշումը:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն (2005թ. փոփոխություններով), (www. arlis.am)
2. ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), (www. arlis.am)
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի: Երևան, «Իրավունք», 2010թ.:
4. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ., (www. arlis.am)
5. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 17.06.1998թ., (www. arlis.am)
6. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ընդունվել է 07.05.2002թ., (www. arlis.am)
7. «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա»՝ ընդունվել է 15.10.1985թ., (www. arlis.am)
8. ՀՀ Սահմանադրական դատարանի 05.05.2017թ. ՍԳ-Ո-1365 որոշումը, (www. arlis.am)
9. ՀՀ մոնիցինգի իրավունք, ուսումնական ձեռնարկ, ընդհ. խմբ. Գ.Գանիելյանի, Երևան, ԵՊՀ հրատարակություն 2015թ.:

**Ваагн Петросян**

Независимый эксперт по правовым вопросам местного самоуправления, преподаватель кафедры юриспруденции и обществознания в Ереванском Северном университете, заведующий кафедрой юриспруденции в Ереванском колледже права, экономики и управления, соискатель кафедры юриспруденции и обществознания в Ереванском Северном университете

#### РЕЗИОМЕ

##### *Гражданская и гражданско-процессуальная правоспособность и дееспособность общин*

В статье обсуждаются проблемы нормативно-правовой системы, регулирующие самостоятельность общин. В частности, вопросы о рассмотрении старейшин как субъектов гражданского и гражданско-процессуального права, а также вопрос об их участии в гражданском процессе.

Действующая правоприменительная практика показывает, что значительная часть общин не присваивают гарантии судебной защиты, установленные конституцией и законами, поэтому в правоотношениях разных сфер возникает ряд проблем по вопросам сохранения и присваивания самостоятельности общин.

Автор пытается поднять проблемы, которые возникают в связи с рассматриванием общин в качестве субъектов гражданского и гражданско-процессуального права РА.

**Ключевые слова:** общины, самостоятельность общин, гражданские права, гарантии, местное самоуправление, судебная защита.

**Vahagn Petrosyan**

Independent expert on local self-government on legal issues,  
Lecturer of the Department of Law and Social Sciences at the Yerevan Northern University.  
Head of the Law Department of the Yerevan Law and Economics College.  
The applicant of the “Judiciary Law” specialty of the Department  
of Law and Public Relations of Yerevan Northern University.

#### SUMMARY

##### *Civil and civil judicial eligibility and functionality of communities*

This article discusses the issues of the normative legal system of community autonomy, in particular the consideration of the Council of the Community as a subject of civil and civil judicial rights, as well as participation in civil proceedings.

The existing law enforcement practice shows that most communities do not implement the judicial guarantees set out in the Constitution and laws, and therefore in different areas are arising a number of problems regarding the keeping and realization of autonomy of the communities.

The author tries to clarify the issues arising from the point of view of communities as a subject of civil rights and civil judicial rights of the RA.

**Keywords:** communities, community autonomy, civil rights, guarantees, local self-government, judicial protection.